28. ՀՈՒՍԵՓ ԲԵԿ ԵՎ ՉԻՉԱԿ (ԾԱՂԻԿ) ԽԱՆՈՒՄ

Ժամանակաց մեկին Հարճեշու մեջ Զիլանածոր մե մարդմ կէղի:

էդ մարդ հէլավ առավ ուր բեռ, գնաց սարի միջու ջաղաջ աղալու. հալա ջաղջի մոտ չը խասեր էր, ջաղջպան դուս հէլավ, չվան եզնից պրծուց, բեռն խուրճու պես թալեց ուր շալակ, տարավ ներս:

էդ մարդ որ էդ բան տեսավ, շատ վախեցավ, ասեց. «Վալա, էսիկ ինձ էլ կսպանա, բեռն էլ կուտա. եզն էլ խետ. ապա ի՞նչ էնիմ, Աստվա՛ծ, որ էնպես ա, ես պտի փախիմ»:

Ջաղջպան բեռան բերանը քակեց. ցորեն լցեց օղունի մեջ, իրիշկեց տեսավ օր բեռան տեր չէկավ, որ էն մարդ կը փախի, բոռաց. - Տո աղբե՛ր, մի՛ փախի, արի՛, արի՛:

էն մարդն էլ ասաց. - Տո վալլա, ես քո ղուվաթ տեսա, քեզնե վախեցա, դու քու Աստված, բեռն էլ քեզի, եզն էլ քեզի, ինձի բան մ'ասեր, ես թողեմ էրթամ:

- Մի՛ վախենար, - ասաց ջաղջպան, - ես մարդ սպանող չեմ, մեկ էլ խարամ ուտող չեմ:

էն մարդ էլ չը վախեցավ. խավատաց, էկավ մտավ ջաղաջ:

Չուրի էկավ, բեռան կես հիջեր էր. ջաղջպան ասեց. - Աղբե՛ր, կոտ բեր, իմ հախ ալուր առնենք, էնենք կլոճ, ես էլ ուտեմ, դուն էլ կեր:

Ջաղջպան կուռիկն առավ՝ չափեց. տաս կուռիկն առավ, տաս բախշեց: Ապա բեռան տիրոջ հողորկեց ցախի, ինքն էլ կլոճ շիքեց: Ցախ որ

էկավ, թոնիր վառեց. կլոճ զարկեց թորվան կող. էփավ: Նոր էկան նստան, հիրարու խետ կերան:

Բեռան տեր էլ սիրտպնդավ, չը վախեցավ. առավ զրուցել խետ ջաղջպնին. - Աղբե՛ր, - ասաց, - քեզի բանմ ասեմ. էս քո ղուվաթ որ քո վրեն ա, հորի՞ մացեր ես էսա սարի մեջ, էղեր ես ջաղջպան. քեզի պետք ա, որ յան Շահի հառեջ, յան Մուլթանի հառեջ, յան Ուռուսու թագավորի հառեջ էղնիս փայլևան. ուտածդ, խմածդ շաքյար, շաքյարլամա էղնի, խագածդ էլ չուխա խապուտ էղնի, հորի՞ ես մացե էսա թոզերու մեջ:

- Հե՛յ, ախմախ մա՛րդ, - ասեց ջաղջպան, - հորի՞, իմ դուվաթն ա շատ, թե Շահին. ես իմ դուվաթ հմեն աղքտներուն ցրվի, մեկ էսա ջաղաջ խերաթլամա իմ շիքե, ի՛նչ մարդու որ ցորեն աղամ, ցորենի հախ կես կը բախշեմ, կես կառնեմ կուտեմ, չուր իմ հոր մեռնելուն. իմ դարտն էլ շատ ա, իմ դարտից վազն արե:

- Դու քո Աստված. քո դարտն ի՞նչ ա, - խարցուց բեռան տեր:

- Ըսկի մի խարցուր, քեզնե ըռճու կէնեմ, ընձեն վազն արե:

- Չէ, - ասաց բեռան տեր, - չէղիր, պտի ընձի խըսա էնես:

- Հե՛յ, մա՛րդ, - ասեց ջաղջպան, - որ էնպես ա, կասեմ. դե, անկաճ էրա:

Հայոց ջոջվորութենի վաղթին, ես էլ մի ջոջվոր ի, իմ անուն Հուսեփ բեկ էր. իրեք խազիա իմ ձեռն էր, մեկ Հարծկեն, մեկ Բերկրի, մեկն էլ Հարճեշ: Իմ խեր էնոնց ջոջն էր. եղավ որ խերս մեռավ, էն մեծավոր մարդեր ժողովան, էկան, ընձի դրին իմ խոր տեղ: Ես հալա տըսվիրեք տարեկան ի. ես էդոնց ջոջվորութեն էնպես կէնի, որ մեկ մախուլ հալա իմ պես ըսկի չէրեր էր: Ութ տարի ջոջվորութեն էրեցի. ես հալա ազապ ի: էդ իրեք խազեսներու մեջ մեկ խատ հըմալ աղջիկ չըկեր, որ իմ աչք ինկեր ինոր, որ ես առնի: Ես էղա քսան ու մեկ տարեկան: Մնաց որ ամռան մեջ, ամսու մեկին, գիշեր մենք քնուկ ինք, աղոթրնի մեջ իմ մեծավորներ հմեն էկած ու լցված ին իմ դիվանխանեն: Ընձի իմացում տվին, ըսին. «Հելիր, տնավե՛ր չէղած, էնքա՞մ տուն էկեր, լցվեր, մեր յայլեն դրեր ա. չենք գիտեր, դոսթ ա, դուշման ա, ի՛նչ ա»:

Ես էլ քնուց հէլա վեր, չորս ծիավոր հօղորկի, գնաց որ ընձիկ պատասխան բերեն՝ տեսնանք ինչ մարդ են: Գացին ծիավորտանք պտոտացին, ջուապ բերին, ասեցին. «Հուսեփ բեկ, դու սաղ մնաս, էսա գալած մարդեր դուշման չեն, բարեկամ մարդ են: Մեզի ասեցին, որ դուք գացեք, մենք կուգանք Հուսեփ բեկին տեսութենի: Մեզի պատիվ տվին, կերցուցին, խմցուցին, մենք էլ հէլանք, թորկեցինք էկանք»:

Հէլա էդ մարդերու պատրաստութեն տեսա, դայվից, շաքրից, բրնձից, վերու մսից: Հալա սահաթմ չէր թամըմեր, տեսա որ խարիր ձիավորով, ըռախթ ու ըռըշմով, էդոնց ջոջվորն էլ խետ էդոնց՝ էկան: Հալա չէկած ին չատրի մոտ, մարդեր խազրվան, գացին էդոնց ձիաներու գլխներ բռնեցին, ուրենք էլ հէլան, էկան իմ չատրի մեջ, ձեռ ձեռաց տվեցինք, բարևանք նստանք:

Էն մարդերուն ասեցի. - Բարով եք էկե, աղբրտի՛ք, խազար բարով, դու հո՞ւստեն եք, ո՞ր տեղեն կուգաք, դո՞ր պտի էրթաք:

Էդոնց ջոջվոր վերուց, ընձի ասեց. - Դու. սաղ մնաս, Հուսեփ բեկ, վերև Աստված, ներքև քե ենք էկե, որ մեզի պախես, տեսնենք Աստված ինչ պտի էնա մեր ու Հաբեշին:

- Հաբեշն ի՞նչ ա արե ձեզի, որ փախեր եք, էկեր եք, - խարցուցի:

Վերուց էդոնց մեծվորն ասեց. - Ես Արապու իշխան եմ, էսա չորս տարի ա, Հաբաշստան խըտ ընձիկ կռիվ ա. չը կարցա, որ էնոր հառեջ կայնի. շատ մարդերս սպանեց, շատ մարդեր կրոնափոխ արեց, շատ մարդեր սրե անցուց, մենք էլ փախանք, էկանք. որտեղ էկանք, էրկրներ նեղ ին, տեղ չկեր, մեզի ասեցին թի՝ Հուսեփ բեկի էրկրներ լեն ու հարցակ ա, գացեք, թե էնի ձեզի պախպանա, չէ ուրիշ մարդ չի կանար պախեր. մնաց որ վերև Աստված, ներքև քե ենք էկեր, որ մեզի պախպանես, չուրի տեսնանք՝ Աստված ինչ կենա:

Ես էլ ասի. - Բարով եք էկեր, վըր իմ գլխուն, վըր իմ էրեսին, քյանի տարի որ ուզեք, ձեզի կը պախպանեմ:

Կերանք, խմանք չուր հիրիկուն. ապա իմ մոտեն իգին առան որ հէլնին էրթան:

Հէլան գացին: Արապու իշխան ընձեն խոսք առավ, որ վաղն էլ ես էրթամ էնոր ղոնախ:

Էնոնք որ գացին, իմ ջոջավորներուն բերի, թամբխեցի. - Տե՛ս, ձեզի կասեմ, էդ մարդ իմալ յուր իշխանավոր մարդերով էկավ ընձիկ ղոնախ, դու էլ էնպես իշխանավոր մարդերով խազըրվեք, էրթանք էն մարդու ղոնախ:

Հէլա առավոտուն, թե էնի խարիր ձիավորով էկավ, ես էրկու խարըրով, ըռախտ ու ըռըշմով, հէլա գացի էն մարդու ղոնախ: Մի ասեր, էդոր մեկ ազապ աղջիկ կէր, անուն Չիչակ խանըմ:

Արապու իշխան կիմանա, որ ես ազապ ի, թամբախ կենա, ուր աղջկան, որ հեբոր ես էրթամ, հէլնի իմ հառեջ, իմ ձիու գլոխ բռնա:

Մնաց որ մենք գացինք չատրի հառեջ. աղջիկն էկավ ձիու գլոխ բռնեց. իմ աչք որ դիպավ աղջկան, ես գիցա իմ սիրտ ճղեցին, էն աղջիկ

դրին մեջ, աչքերս պաղավ, ջանս թուլցավ, ղուղում էլ չը մնաց իմ չոքեր, չը կարցա ծիուց հիջեր ի, աչքս մնաց աղջկա աչքեր: Ես քսան ու մեկ տարի որ մեկ էնպես բան չէղեր էր իմ էրկրի մեջ, իմ աչք հընկեր էնոր:

Ինչ գլոխ ցավցուցեմ, մեկ խազար դուպարով ծիուց հիջա, Չիչակ խանըմըմ էլ իմ ծին տարավ, կապեց:

Ես գացի Արապու իշխանի չատրի մեջ, ձեռ ձեռաց տվեցինք, բարևանք, նստանք:

Էդ Չիչակ-խանըմ էկավ մեր հառեջ, խզմաթ էրեց, չուրի մենք էկանք: Ապա ի՛նչ կասես, որ իմ ուտած-խմած խարամ էղավ Չիչակ-խանըմի հապով:

Հալա չը խասեր ի տուն, չորս ծիավոր էն սըհաթուն էլչի հողորկեցի Արապու իշխանի մոտ, թի կը խնդրեմ որ բարեկամութեն դնենք հիրա մեջ:

Արապու իշխան խոսք տվեց, էլչիք դարձան էկան:

Առավտուն հէլա պատրաստութեն տեսա, չորս բեռ շաքյար բառցի, տաս բեռ էրադ, գինի, խարիր խատ ըստերջ օխչար, հիթսուն բեռ ալուր հողորկի, տարան թասլիմ արեցին Արապու իշխանին, թի հէսօր չէ, վաղ կուգանք, նշան տվեք էնենք:

Էն մեկել օր առավոտուն հէլա առա, տաս ձեռք դումբ ու զուռնա, խինք խարիր ծիավորով գացինք նշանտվեք. թվանկ կրակելով, փշտով դարտկելով, էնպես որ կասեր թե օրդու յա՝ էկավ: Էդոնք հէլան, մեր ծիաներ բռնեցին, խուրեր ցրվեցին, հապա ժողվանք, էկանք Արապու իշխանի չատր, էն տեղ կերանք, խմեցինք, չուրի իրեք օր ուրախութեն արեցինք:

Ապա իմ իշխաններ վերցին, Արապու իշխանին ասին. - Թի քո աղջկա ղալանն ի՞նչ ա. ասա որ շուտով հողորկենք գա, մեր խարսն էլ շուտով տանենք:

Արապու իշխան էլ վերցուց, ասաց. - Մեկ աղջիկ ա, ես ղուրպան արի իմ Հուսեփ բեկին, հինք, ուր մարդութեն:

Հէլանք հմենովս իզին առանք, էկանք տուն, համա ի՞նչ էնեմ որ Չիչակ-խանըմի սեր ծի վառեց, ժողվեցի իմ իշխաններ, ասեցի. - Դու գիտեք, որ իմ տուն կնիկ չկա, իմ մերն էլ պառավ ա. շուտ էրեք, որ Չիչակ-խանըմ բերինք:

Իշխաններն ասեցին. - Հուսեփ բեկ, ղալան ի՞նչ կուտաս, առնենք էրթանք, որ խարս բերենք:

Ես էլ հէլա տվի խարիր հոկըճ, հիսուն խատ որձ ծի, խազար խատ դեղին օսկի, խարիր խատ չուխա-չարքյանզի, էրկու խարիր թոփ ղուքնի, էրկու խարիր էլ քիրման-շալ տվի: Էդ մարդեր առան գացին, տարան

թասլիմ արեցին Արապու իշխանին, էն էլ ուրախութենով վերցեց ղալան: Իրեք օր մնաց, խարսնըսի թատարուք տեսանք, գացինք բերինք. յոթն օր, յոթն գիշեր, յոթ ցերեկ խարսնիս էրի, դումբ ու զուռնա զարկի, կերանք, խմանք, ուրախութեն էրեցինք:

Մնաց օր վեց տարի պախպանեցի էդ Արապու էլ մեր էրկրներու մեջ. վեց տարուց սորա՝ Թուրքման զոռեց Շահ-Հազկերտին, ես էլ Շահ-Հազկերտու ջոջվորի մեկն ի. թուղթ գրեց Հազկերտ ընձի թե. «Ի՞նչ կանես, Հուսեփ բեկ, Թուրքման իմ էրկրներ քանդեց, ավերեց, քիչ մնաց որ իմ թախտն էլ ընձնե առնի, ի՞նչ կէնես, քո բախտն եմ, ընձի իմդատ խասիր»: Ես էլ հէլա, ինչ ղդար ասքյար կեր, առա գացի էնոր հիմդատ: Չիչակ խանըմն էլ էկան խոր տուն տարան դարձ: Ես որ գացի կռիվ, հըլա չը խասեր ի, Թուրքման կոտրեցի, Շահի խողից խանեցի, քսան ու չորս գեղ ու քաղաք էլ Թուրքմանից առա: Վեց ամսուց սորա հետ դարձանք, էն էր, ձուն դրեց, ապա դարձանք: էկանք Շահի մոտ. Շահ շատ ընդունեց, հազ էրեց, շատ ուրախացավ վըր մեզիկ, իմ ասքրին ամենուն մեկ-մեկ նշան էտուր, ինձ էլ մեկ փոճ էտուր. նոր հետ դարձանք, էկանք մեր տներ:

էկանք մեր տներ, չոքմ ձուն դրեր էր. գեղին որ մոտեցա, քյանի կիրիշկիմ, Չիչակ խանըմ ոչ դուռն ա, ոչ տանիս: Մեկ էլ տեսա որ մերս դուս էկավ տնեն, խարցեցի թե. - Մերիկ, հո՞ւր ա, Չիչակ:

- Աչքս քոռնա, - ասաց մերս, - որ դու գացիր կռիվ, Չիչակ խանըմ խոր տուն էր, էրկրեն ջուապ էկեր էր, թե. «Հաբաշստան հետ քաշվեր ա, էլման էրկիր մացեր ա արապներուն, քեֆ արապներու քեֆն ա». էդ խոսք որ լսելուն պես, դու էլ տուն չէր, ձուն դրեր վըր չատրներուն. Արապու իշխան առավ ուր էլ, գնաց: Չիչակ խանըմն էլ խետ ուրենց առան գացին: Քո չատրներ մնաց ձան տակ, մարդ չկեր, որ բառներ, յոթն օր, յոթ գիշեր, մացի մինակ ձան մեջ. նոր հովըվներ էկան, բարձանք չատրներ, առանք, էկանք տուն. Չիչակ խանըմն էլ էնպես գնաց:

Արի տես, ըս անգամիս, որ տեղս մըռմըռաց:

Գիշեր չը գիցա իմալ հընցավ վրես. առավոտուն հէլա վեր, իրեք խարիր ձիավոր ժողվի, խուրճիմ՝ էլ լիք օսկի լցի ճամբխու խամար, ինկյանք ճամբախն ու գացինք:

Խինգ օր որ գացի, խուրճու մեկ թայ օսկին գնաց, տեսա որ անօգուտ էր էսա ասքյար խըտ ընձի տանել, իրեք գոմշու ղուվաթ ունիմ, ասի, որ էնպես ա, ես մինակ կէրթամ: Ասքրներ հետ դարձուցի, խանչի իմ Աստված, մինակ ընկա ճամբախ, գացի: Քսան օր քշի ձինս, Արապու իշխանի քաղքին անճախ խասա: Արապու իշխան ու ուր տնեցիք, ձի որ տեսան, ձիուց ցածր բերին, վերցուցին, տարան նարդյուներով վերին

քոշք, շատ ուրախութեն արեցինք. Չիչակ խանըմն հապով՝ էղա աստըվորով մեկ: Քյանիմ ավուր սորա, հէլա առա պտոտալ, կէրթեք խըտ մարդերաց հօրե մեկ սար, մեկ ծոր կը պտոտի: Մնաց օր հիրիկվան վաղքն էր, թուրը թևս հէլա գացի չարշուն, մեկ ջոջ երևելի թուճարմ կեր էնտեղ, գացի նստա էնոր կուշտ դուքան, մեկ ծեռսի վըր թրին, մեկ ծեռս էլ ջղարա կը քաշի: Մեկել էն տեսա որ գոռում-գոչում ինկյավ քաղքի մեջ. «Հա՛յ Կոլոտ բեկն էկավ, հայ Կոլոտ բեկն էկավ». որ կը փախեր, գլոխ կառներ դուքնի դրընդին, փափախ կ'ինկներ, որ սոլի մեկ թայ կը խագեր, մեկել թայ տեղ կը թողեր փախեր, որ դուքնի դուռ փակեց, որ անփակ թորկեց փախավ, հեմալ օրոտումըմ՝ ինկյա՛վ քաղքի մեջ, որ մեր մանուկ ուրացավ:

Խարցուցի. - Ջանը՜մ, էս ի՞նչ բան ա, դու հեմալ կը փախիք:

Էդ փախնողներուց մեկ ընձի ջուապ չէտուր, նոր թուճար վերցեց, ասեց. - Էդի Կոլոտ բեկն ա, կուգա, յոթ գմշու ղուվաթ ունի, հինքն էլ զրեհ ա խագուկ, սիլահ, թուր, թվանք, քյար չէներ էնոր:

Մեկել իրիշկեցի, տեսա որ Կոլոտ բեկ էն դեխեն էկավ. հինք օղորթ կոլոտիկ էր, ապա էդոր ճակտի լենութեն էրկու թիզ կեր, խինք թիզ էլ էդոր թիկունքի լենութեն: Դուքներ հա թալնելով՝ էկավ չուրի իմ մոտ. բարև էտուր ձիկ, ասաց. - Հուսե՛փ բեկ, հե՞ր կէրթաս:

Ասի. - Աստված հաջողա էրկուշաբթի պտի էրթամ:

- Թե որ կէրթաս, - ասաց, - բիլա ձիկ չէրթաս, ընչի որ մարդ չկա քո խետ, ես գամ, քե, քո կնիկ ընցուցեմ Արապի սինոռից, ես հետ դառնամ, դուք գացեք, մեկ աղեկութեն էլ ես թ'էնեմ խըտ ձեզիկ:

Ես էլ ասի. - Բարի, խազար բարի:

Կոլոտ բեկ թողեց գնաց:

Ձեն խասավ Արապու իշխանին, թի. «Հուսեփ բեկն, Կոլոտ բեկ խըտ հիրար զրուցին, որ Կոլոտ բեկ խըտ հուրանց կէրթա ճամբխու դնելու»:

Արապու իշխան կանչեց ձիկ, ասաց. - Աստված քո տուն ավերա, քո ձեռնով քո տուն քակեցիր, Չիչակ խանըմ քո ձեռնեն խանեցիր, հէլի՛ր, ա՛ռ Չիչակ խանըմ, որ փախիս պրծիս:

- Ջանըմ, - ասեցի, - մի ծիծաղեք վըր ձի, Կոլոտ բեկն ի՞նչ ա, որ իզնե առնի Չիչակ-խանըմ, էնոր մեկ դրպի ղուրպան կանեմ:

Էդ որ ասեցի, Արապու իշխան ծըծղաց վըր ձի. - Հե՛յ, ախմախ, - ասաց, - խարիր խազար քե պես մարդ չի կանար վըր էնոր, դո՞ւ պտի կարաս, հէ՛լ, փախիր քյանի աչքերդի չոր ա, իրեք օր կա ձեր ղավըլ, իրեք ավուր մեջ կը փախիս, պրծիս:

Արապու իշխանի խըսին լսեցի, քաշեց իրեք խատ արապստան քյահել դուս. մեկ ես խեծա, մեկ Չիչակ խանըմ, մեկն էլ մեր բարխանեն բարձինք, բարևանք ու քշեցինք:

Իրեք օր, իրեք գիշեր, իրեք ցերեկ քշեցինք, մեկ տեղ չը դադրանք. վերջինք էր, խասանք մեկ հաղբրիմ վրեն: Չիչակ խանըմին ասեցի. - Խոգիս հէլնի էսա իրեք օր՝ գիշեր-ցերեկ կը քշենք. դու կնիկ զավակ ես, չես կանար դեմ տար քնու, հիջնինք վըր էսա հաղբրին. չայմ շինեմ, խմա, գլոխդի դիր վըր իմ չոքին, փշում քնիր, նոր հէլինք էրթանք:

- Ականջ մ' ինե, - ասեց Չիչակ խանըմ, - քշա, որ պրծինք շուն Կոլոտ բեկից:

Մեզեցի, տեսա, որ էդոր խոսք աղեկ էր, մենք էլի քշեցինք, հմա ինչ անեմ որ հա՛ Չիչակ խանըմի աչք հետևն ա: Մեկ էլ բիրտան ձիկ վերուց ասաց. - Տնավեր չէղած, մեկ իրիշկա՛ հետևդ, վալլահի՝ Կոլոտ բեկն էկավ:

Ես էլ դարձա հետևս իրիշկի, տեսա՝ օղորթ որ փոթորկի պես Կոլոտ-բեկ կուգա:

Խասավ, ձեռ զարկեց իմ զանգվին, բարև էտուր, ասաց. - Հե՛յ, բեբախտ, ընչի՞ քո խոսքի տեր չէղար, դու ասիր էրկուշաբթի պտի էրթամ, ըպա էրկուշաբթի հէսօր ա, հորի՞ կը փախիս:

Ես վերցի, ասի. - Բան չկա, քշա՛ էրթանք:

Հինք ինկյանվ մեր հառեջ, կէրթա, մենք էլ հետևանց. հմա ինչ էնեմ, որ մեր ձիանք չեն խասնիր էնոր:

Քիչմ ճամբախ գացինք, մեզեցի, ասի. «Ջանը՞մ, էսա մեկ ոչինչ մարդ ա. էնոր ախ ինկեր ա վըր մեզի, վալլա, էսօր մեկ դրբի կը սպանեմ»:

Կիրիշկեմ, տեսնեմ որ Չիչակ խանըմի աչքերուց էլ մեկ դեխացեն չըռկի պես արցունք կը թափի. կրակ լցվավ վըր ջանիս, խանչի իմ Աստված, գողտուկ հետևանց խասա Կոլոտ բեկին, մեկ թոփուզ զարկի էդոր գլխուն, թոփի մի ձեն էտուր, օղն կտրավ, օղ մնաց իմ ձեռ, թոփուզ բանձրցավ, ինկյավ գետին:

Կոլոտ բեկ ըսկի ուր վրեն մալ չէրաց, ասեց. - Քշա՛, Հուսե՛ի բեկ, խանագի վաղթ չէ:

Ես ձիկ մեզեցի, զարմացա. «Հե՞յ վախ, - ասեցի, - որ էսիկ իմ թոփուզով չը մեռավ, էլ բանով չը մեռի»:

Փշում տեղ էլ քշեցինք, ասեցի. «Վալլա՞, իմ թուրն էլ վըր էդոր պտի ջըռբեմ. տեսնանք ի՞նչ կուգա դուս»:

Քշեցի վրեն, գողտուկ հետևանց մեկ թուր էլ զարկեցի մըջ գլխուն. էլմը ասեց. - Քշա՛, ջանըմ, խանագի վաղթ չէ:

Մեկ փշուր էլի քշեցինք, ես մացի մեկ մզրաղ, մզրաղն էլ հետևանց զանեցի, էլըմ քյամ չարեց, մզրաղ կոտրավ:

Նոր Կոլոտ բեկ հետ դարձավ վըր ծիկ. - Չ՞է, - ասաց, -՝ ես քե կասեմ՝ խանագի վաղթ չէ, կանի՛, տես, խանագն էսպե՛ս կանեն:

Չեռ թալեց իմ փողպատ, ծիուց քաշեց ցածր, մեկ գոմբ զարկեց իմ պուպուճկին, իրեք օր մեռուկ մացի գետին, մեկ ատամ ասես մնա՛ց իմ բերան, չը մնաց:

Կոլոտ բեկ առավ Չիչակ խանըմ, իրեք ծին հուր խետ՝ գնաց:

Իրեք օրեն սորա խելք էկավ գլոխս, հէլա նստա, փշում լացի Չիչակ խանըմն հապով, նոր դարձա, գացի Արապու իշխանի տուն: Չիկ որ տեսան, քոշքից վազեցին, էկան իմ հառեջ:

- Տեսա՞ր, - ասեցին, - մեր խոսքն իմալ էկավ գլոխ, դե հէլ էրթանք վերին օթաղ, բան չկա, էլմը դու մեր փեսեն ես, մեր աչքն ես, չէղավ, քե ուրիշ ընտիր աղջիկ կուզենք:

- Չէղի՛ր, - ասի, - էն Աստված շհատ էղի, յան պտի ես մեռնեմ, յան պտի Կոլոտ բեկն սպանեմ Չիչակ խանըմից իմ խասրաթն խանեմ, չուրի հորն մեռնելուն:

- Անխելք մ'էղիր, - ասեցին, - դու Կոլոտ բեկին չե՛ս կանար սպաներ:

Ականջ չարեցի էդոնց, գացի չարսուն, էրկու խիտր ասեղ առա՛. գացի թուր շինողի մոտ, տվի մեկ թուր շինել:

Իրեք օր որ թմավ, տըսնվխինգ օսկի տվի թրի շինելեն, թուրս առա, զարկի դաստեմ պողպաթի, պանրի պես կտրեց: Ուրախցա, առեցի ու գացի: Ինկյա չարսուն մեկ բալատ ուզեցի, որ Կոլոտ բեկի տեղն ծիկ նշանց տա. ինչ մարդու ասեցի, հախու չէկան. սորա ճանկմ օսկի տվի, մեկ աղքատ մարդմ գտա:

էդ մարդ ընկյավ իմ հառեջ, գացինք, որ մոտեցանք Կոլոտ բեկի քոշքին, որ մեկ մեշի մեջ էր, վահիտ մինակ. մարդն ծիկ նշանց էտուր ու խըտ կրնկին հետ դարձավ. ես էլ կանչեցի իմ Աստված, յավաշ-յավաշ գացի:

Աստված հեմալ կամեցավ, որ մութ կոխեց, անձրև բռնեց գալ, մարդ-մարդու էլ չէր տեսներ. մեշի մըջեն ճրագի լուսմ բռնեցի, գացի խասա քոշք, նարտիվներով վեր հէլա, գացի դռան դիմին իրիշկեցի, որ Կոլոտ բեկ թիկներ ա վըր բարձին, Չիչակ խանըմն էլ մեկ յան. Կոլոտ բեկի էրկու աղբեր ցածր նստած են,իրեն էլ մեկ յան նստեր ա, մեկ օխչար սաղ զանած շիշ, դրած վըր բուխերկի կրակին, Կոլոտ բեկի աղբերն ա, շըշի ծեր բռներ ա, կը պտոտցա: Կոլոտ բեկն էլ բութուլկա էրաղ դրե հառեջ, մեկ թարաֆեն կը խմա, մեկ թարաֆեն էլ լըփ կը զանի օխչրի մսի մեջ.

կառնի, սաղ-սաղ կը դնա բերան: Ես էդ բաներ որ տեսա, մըզմըզդուն ինկյավ իմ ջիկըրներ, խանչի իմ Աստված, որ մեկ էլ խասիմ իմ Չիչակ խանըմին:

Փշում մնաց, Կոլոտ բեկն ասեց ուր աղբոր. - Հէ՛լ դուս, իրիշկա, տես, պարզե՞ր սւ, որ առավոտուն էրթամ չարսուն, էլմը թալան էնեմ, բերեմ:

Աղբեր հէլավ դուս, ասի. «Իմ թուր մեկ ջըռպեմ, տեսնեմ, կը կտրա՞, չէ չի կտրա»:

Մոտեցա, հետևանց մեկ թուր էդոր զարկի, ոչ ա՜խ, ոչ օ՜ֆ՝ պանրի պես կտրեց, էրաց էրկու կտոր, մեկ կտոր էնդեխ ինկյավ, մեկ՝ ենդեխ: Կոլոտ բեկ տեսավ, որ աղբեր հագընցավ, էն մեկել աղբերն հողորկեց, էն էլ էնոր պես սպանի:

Էսադիր խրամայեց ուր խոր, խերն էլ էկավ, էն էլ էնոնց պես սպանի. թուրսի սրբի, առա ձեռսի, մոտեցա դռան, տեսա, ի՞նչ տեսնեմ, Կոլոտ բեկ էրադ թունդ բռնեց, ինկյավ քուն, դուռ բացի, մտա նեքսև:

Չիչակ խանըմ որ աչքն առավ ձիկ, հինք թալեց վըր իմ օտաց, ասաց. - Տնավե՛ր չէղած, էսոր աղբրտիք մկա հիմցան էկան, կը դնեն քե բուխերկի կրակի մեջ, կը վառեն:

- Չիչա՛կ ջան, մի վախենար, - ասեցի, - իրեքն էլ սպաներ եմ, մեկ մացեր ա Կոլոտ բեկ, կանաս, մեկ ճարմ էրա ընձիկ:

- Կայնի, - ասաց, - Աստված ողորմած ա:

Ես կայնա մուք, Չիչակ խանըմ քնուկ տեղ մոտեցավ Կոլոտ բեկին, գլոխ մաժելով, ճակատ մաժելով, ձեռ բերեց դոշի զըրխի չարփասքներ հարձկեց, մաժելով քուն քաշեց Կոլոտ բեկին. վազավ էկավ իմ մոտ, յավաշմ գացի, թուր քաշի, դրի վըր դոշին, մեկ գլոխ հինք, մեկ ես՝ ճխտեցինք, կտրեց էրաց էրկու տապակ, էդի թըխտըպաց ու դիպավ ընձիկ, էրկու կողս կոտրավ: Կոլոտ բեկի գլոխ կտրի, առա Չիչակ խանըմ, գիշերով հէլա էկա:

Կոլոտ բեկի գլոխ որ ձեռս տեսան, Արապու իշխան յուր իշխաններով, քաղաք հմեն հէլան իմ հառեջ, ընձիկ շատ պատիվներ արեցին, էրկու բեռ փարա էկավ ձիկ հատիա:

Հիրկուն որ էղավ, Չիչակ խանըմ ձիկ ասաց. - Ըպա, տնավե՛ր չէղած, ես Կոլոտ բեկից տղով եմ մացե:

«Հե՜յ վախ, - ասի, - սիրտս մեկ քիչ պաղավ Չիչակից»:

Մեկ ամսուց սորա, առա Չիչակ խանըմ, էկա մեր էրկիր:

Ին ամիս որ թըմըմավ, Չիչակ խանըմ պարկավ, տղեմ էբեր. ինչ ղըդար ձիկ ջոջվոր կեր, էկան ձիկ աչքալուսեք:

Տղեն օրե օր կը ջոջներ. էղավ տըսվերկու տարեկան, հըմալ էղավ որ էդոր ղուվաթին, էդոր կտրճութենեն աշխարհ հըմեն զարմացավ: Ինչ մարդու որ ձեռ տեր, ձեռ կը պրծցներ, ականջին տեր՝ ականջ, գլխուն տեր՝ գլոխ կը պրծցներ. օր չկեր որ գանգատավոր չիգեր իմ դուռ, չասեր, թի «Հուսեփ բեկ, Ասուն բախշա, տղիդ խրատմ տուր»:

Ես որ խրատ կուտի, կամ զանի, Չիչակ խանըմ կուլեր թի՝ «Հուրնից չէ, էն հապով կը զանի»: Ես էլ Չիչակի սիրու հապով՝ ինչ որ էներ, չի կանի ձեն էնի:

Մնաց որ գանգատ գնաց Շահ-Հազկերտի մոտ, թի՝ «Հուսեփ բեկին տղեմ կա. էրկիր էրկրով ձեռ կուլան»:

Շահ-Հազկերտ դրեց վըր ծի. թի՝ «Յա տղիդ խրատմ տուր, յա իմ էրկրից հէլի, ուրիշ մարդ դնեմ քո տեղ»:

Թուղթ խասավ ծի, ապա ի՞նչ էնեմ, որ իմ կնկա խաթրին չեմ կանար բանմ՝ ասեմ տղին, շիվար էղա, մացի:

Աստըծով իմ աներոջ թուղթն էլ էն սըհաթին էկավ, թի՝ «Ի՛նչ կէնես, էրկու խատ ասլան փայդա էղած են մեր սար. ո՛չ մարդ, ո՛չ անասուն չի կանա էդ սարեր պտոտա, կանաս, արի մեկ իլաճմ էնենք»:

Շահ-Հազկերտի թուղթ պախի, էդ թուղթ տղից գողտուկ տարա Չիչակ խանըմի մոտ ասի. - Իզին տուր քո տղին, էրթանք, բալքիմ ասլաներ սպանենք, քո խեր նեղութենից ազատենք:

Չիչակ խանըմ իզին էտուր, առա տղեն գացի:

Գացինք, խասանք Արաբստան, հիջանք իմ աներոջ՝ Արապու իշխանի տուն, կեր ու խումից սորա, ես ու Արապու իշխան հէլանք դուս, գողտուկ տեղ հիմցում տվի, որ տղեն հիզնե չէ, Կոլոտ բեկից ա, էս ղդար էլ գանգտվոր կա վրեն, կուզեմ, որ էսիկ կորուսեմ:

Արապու իշխան միացավ խըտ իմ խոսքին. խանչեցինք տղին, ասինք. - Որդի, մեզիկ պաղ ջուր խարկավոր է. էտ սարի գլխու հաղբուր կը տեսնաս, որ կանանչ ա, առ էսա գավ, տար էն հաղբրից պաղ ջուր բեր, որ խմենք:

Տղեն հեծավ ծին, գնաց. գնաց հաղբուր, կզվավ որ ջուր լցա, մաղազից էրկու ասլան դուս հէլան, մեկ էն դեխեն, մեկ էն դեխեն, հասան վըր տղին. էդիկ ըսկի չը վախեցավ, մեկ ձեռ թալեց մեկի գլոխ, մեկ ձեռ թալեց մեկի գլոխ, գլխներ զանեց հիրարու, էրկսի գլոխ ջնջխվան, փակվան հիրար, շրտով կապեց, թալեց վըր ծիուն, մեկ էն յան, մեկ էն յան, ինքն էլ գավ լցեց ջուր, խեծավ ծին, առավ էկավ:

Էդ որ տեսանք, շատ զարմացանք էդոր կտրճութենին:

«Հա՜յ, հա՜յ, - ասեցինք, - էդ յոթ ղաթ հընցուց Կոլոտ բեկին»: էդ տեղեն տղի անուն մնաց Կոլոտիկ բեկ:

Տեսա որ էդ տեղն էլ բանմ չէղավ, առա Կոլոտիկ բեկ, մեկ օխչրի ջանդակ էլ վերցրի խետս, էկանք: Մեր ճամբախ ինկյավ մեկ մեշիմ մեջ, չորս օր մեշի մեջ գացինք, հիրկուն էղավ, չատր զանեցինք, կրակ վառեցինք:

- Տղա՛, Կոլոտիկ, - ասեցի, - օխչրի մեկ ոտ բռնա կրակին, էփենք, ուտենք:

Կոլոտ ձեռ թալեց օխչրի մեկ ոտ պրծըցեց, դրեց կրակին, մեկ էլ տեսանք, որ մեշի մեջեն մարդակերպ-այլակերպ բան մի, փետեր կոտրտելով, ջարդրդելով էկավ. խասավ, ձեռ թալեց, Կոլոտիկի ձեռնեն օխչրի բուտ փախուց ու աներևութք էղավ: Կոլոտիկ շիվարավ, ձիկ խարցուց. - Խերիկ, էս ի՞նչ էր, որ միս փախուց:

- Որդիս, - ասեցի, - ես ի՞նչ գիտեմ, գազան էր, ի՛նչ ջանավար էր:

- Դե կայնի, խերիկ, թե մեկ էլ էկավ, ես գիտեմ՝ էնիկ:

Կոլոտիկ օխչրի մեկ բուտն էլ կտրեց, դրեց կրակին, հըմա էնոր աչք մնաց դըխ մեշեն: Բիրդան էլման փետեր կոտրտելով՝ ջարդրդելով էկավ էդ այլակերպ ջանավար, խասավ, փանճեր թալեց, որ միս առներ: Կոլոտիկ բանձրցավ, միս տփեց վըր էդոր գլխուն, էրկուս գրկըվան հիրար, առան կռիվ խըտ հիրարու. էդոնց կռվու հախուն իմ չոքեր դողաց, ես պուպուզա մեկ ծառի տակ ու վըրվըրացի:

էդոնց ձեն ու օրոտում չուրի լուսու դեմ էկավ, չը կտրվավ: Լուս որ բացվավ, քաշեցի թուր, ինկա էդոնց արնի դավսի խետ, գացի տեսա, որ գացած ամեկ ջոջ պալի մի տակ, էրկուսն էլ ինկյած ա՝ մեռած ա:

«Օրշնյալ ի Աստված, - ասեցի, - էրկիր պրծավ Կոլոտիկից»:

էկա խեծա իմ ձին, քշեցի դըխ տուն:

Տուն որ խասա, Չիչակ խանըմ դուռն էր,աչքն առավ ձիկ, որ տեսավ Կոլոտիկ խետս չէր, խարցուց. - Հո՞ւր ա Կոլոտիկ:

Ասեցի. - Մնաց պապու տուն:

Չը խավատաց, տփեց վըր ուր գլխուն, նստավ էլաց. իրեք օր՝ գիշեր-ցերեկ էլաց, տամլա կապեց, մեռավ Չիչակ խանըմ:

Ես որ էդ տեսա, Չիչակ խանըմի գերեզմնի սիրուն, թոպա էրեցի, որ էլ աստըվոր չը մտնեմ, հէլա իմ տուն ու տեղ, ինչ որ կեր-չկեր, հմեն ցրվեցի աղքտներուն, մեկ էսա ջաղցի գին վերցի, էսա ջաղաց խերաթլամա շիքեցի, չուրի հօրն մեռնելուն՝ ցամաք խաց պտի ուտեմ:

- Որդի՛, էս ա իմ դարդն, որ ես քեզի խըսա արեցի, կը տեսնաս, որ մեկ ատամ էլ բերանս չկա: Դե, հէ՛լ, բեռդ բարձ, ել գնա: Աստված քո խետ, խազար բարի էկար:

Մարդն հէլավ, բեռ բարձեց, տվեց եզն հառեջ ու մեզելեն էկավ:

Ջադջըպնի խըսից շատ զարմացք մնաց: